ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/171

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11374-2020 գրությամբ «Նարեկշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Շնողի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.07.2020թ. թիվ 460 գրության հիման վրա, 30.07.2020թ. թիվ 26/26-1/11374-2020 գրությամբ նախաձեռնել է «Նարեկշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նարեկշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նարեկշին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ դիրքորոշում չի ներկայացրել:

«Նարեկշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/171 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:50-ին և 20.08.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Շնողի համայնքապետարանի ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Շնողի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 24.07.2020թ. թիվ 460 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Շնողի համայնքապետարանի կողմից 30 հունիսի 2020 թվականին հայտարարված ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/08 ծածկագրով ընթացակարգի սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել «Նարեկշին» ՍՊԸ-ն և «ՄՆԱՌՏ» ՍՊԸ-ն:

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքները Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Նարեկշին» ՍՊԸ-ն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընթացակարգի անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր՝ 2020 թվականի հուլիսի 7-ից 12-ը ներառյալ: Ընթացակարևգի գնահատող հանձնաժողովը՝ առաջնորդվելով Օրենքի 35.1 հոդվածով՝ անգործության ժամկետի ավարտից հետո 2020 թվականի հուլիսի 13-ին ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ «Նարեկշին» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս պայմանագիր կնքելու նպատակով 10 աշխատանքային օրվա ընթացքում առկա ֆինանսական միջոցների մասով ներկայացնի որակավորման 100% ապահովում և պայմանագրի 10% ապահովում: Ի պատասխան գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 13-ի ծանուցման «Նարեկշին» ՍՊԸ-ն 14.07.2020թ. ներկայացրել է գրություն, համաձայն որի՝ Ընկերությունը տեղեկացնում է, որի չի կարողանում ապահովել Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի 100% որակավորման և պայմանագրի 10% ապահովումներ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով «Նարեկշին» ՍՊԸ-ի գրությունը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել վերջինիս հայտը և ընտրված մասնակից ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «ՄՆԱՌՏ» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/171 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:50-ին և 20.08.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շնողի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***23.06.2020թ.***:

2. Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***09.06.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11374-2020 գրությունը, Շնողի համայնքապետարանի 24.07.2020թ. թիվ 460 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*** Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ ***<u>օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝</u> ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում,*** իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: ***Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:*** Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման.

Նույն կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի***

հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝

ա. նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,

բ. ***նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների չափով ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով,*** իսկ հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով.

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը,*** և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Այսպես՝ Շնողի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նարեկշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գանահատող հանձանժողովը 13.07.2020թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ «Նարեկշին» ՍՊԸ-ն առկա ֆինանսական միջոցների մասով,

որը կազմում է 10061596.8 ՀՀ դրամ, բանկային երաշխիքի ձևով պետք է ներկայացնի 100% որակավորման ապահովում և 10% պայմանագրի ապահովում, իսկ մնացած ոչ առկա ֆինանսական միջոցների մասով՝ նույնը տուժանքի համաձայնության ձևով, որը հետագայում պետք է փոխարինվի բանկային երաշխիքով: Նշված փաստաթղթերն ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում դրանք չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ վերջինս գրությամբ ծանուցել է, որ սահմանված ժամկետում չի կարող ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ բանկային երաշխիքի ձևով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընթացակարգի հայտարարությունը և հրավերն արձանագրում եմ, որ ***23.06.2020թ.***, հրապարակված Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում տրամադրված գնումների պլանի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված և ***09.06.2020թ.*** հրապարակված գնումների պլանում տվյալ գնման առարկայի համար սահմանվել է ֆինանսական միջոց՝ 23 956 190 ՀՀ դրամի չափով:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ ***եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:*** Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով հայտի ապահովում նախատեսված չէ, մինչդեռ հաշվի առնելով այն փաստը, որ համաձայն հրապարակված գնումների պլանի գնման առարկայի համար մինչև Ընթացակարգի

կազմակերպումն արդեն իսկ նախատեսված է 23 956 190 ՀՀ դրամ գումարի ֆինանսական միջոց (100%-ի չափով), և նախահաշվային գինը գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցում է, ուստի համաձայն Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի՝ պետք է նախատեսվեր հայտի ապահովում, ինչը Պատվիրատուն չի նախատեսել:

Միևնույն ժամանակ գնումների պլանով տվյալ գնման առարկայի համար 100%-ի չափով ֆինանսական միջոց նախատեսված լինելու պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.07.2020թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ «Նարեկշին» ՍՊԸ-ն առկա ֆինանսական միջոցների մասով, որը կազմում է 10 061 596.8 ՀՀ դրամ, բանկային երաշխիքի ձևով պետք է ներկայացնի 100% որակավորման ապահովում և 10% պայմանագրի ապահովում, իսկ մնացած ոչ առկա ֆինանսական միջոցների մասով՝ նույնը տուժանքի համաձայնության ձևով, որը հետագայում պետք է փոխարինվի բանկային երաշխիքով: Այնուհետև ծանուցմամբ ներկայացված պահանջը չկատարելու հիմքով գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ «Նարեկշին» ՍՊԸ-ի հայտը մերժել է: Ընդ որում, եթե անգամ համաձայն վերոնշված ծանուցմամբ առկա է 10 061 596.8 ՀՀ դրամ գումարի ֆինանսական միջոց, ապա Պատվիրատուն Կարգի 18-րդ կետով սահմանված կարգով գնման պլանում պետք է կատարեր նախատեսված ֆինանսական միջոցի չափով համապատասխան լրացում, ինչը նույնպես չի իրականացել:

Այսպիսով՝ գտնում եմ, որ վերոհիշյալի արդյունքում խախտվել է գնման ընթացակարգի ողջ տրամաբանությունը, ողջ բնականոն ընթացքը:

Մինչդեռ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգն իրականացվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Նարեկշին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11374-2020 գրությամբ «Նարեկշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**